ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

ԴՊՐԵՎԱՆՔԵԱՆ ՔԱՐՈԶՆԵՐ, Համադրեց Դ. Լեւոնդ Եպս. Դուրեան, Հոգեւոր Հովիւ Մանչեսթրի Հայոց. Տպ. Կ. Ց. Ներսէս, Փարիզ, 1929, 8° էջ ԺԳ + 250։ Գին՝ չիլին 4.։

Դ. Լեւոնդ Սրբազան իր ՊԱՐԶ ՔԱՐՈԶՆԵՐու շարքին վրայ կ'աւելցնէ նոր հատոր մը, ԴՊՐԵՎԱՆՔԵԱՆ ՔԱՐՈԶՆԵՐ տիպագրութեան տակ, ընտիր թղթով և մաքուր տպագրութեամբ։

Այս հատորը տպագրուած է Տիար Ներսէս Կիւլպէնկեանի ծախքով, իբրև գրական մատնանշան իր յաւէտ ողբացեալ վաղամեռիկ պաւկին ՊՕՂՈՍԻ։

Դ. Լեւոնդ Սրբազան այս քարոզները համադրած է Ամեն. Դուրեան եղիշէ Ս. Պատրիարքի Քահանայութեան Յիսնամեայ Յոբելեանին առթիւ, իբրև յիշատակ Ն. Ամեն. Սրբազնութեան Դպրեվանքի Վերատեսչութեան եւ իբրեւ փունջ մը գրական եւ շունչ մը հոգեկան, կազմուած նախատակ և ողջ Դպրեվանքցիներու մտքի և հոգիի ճառագայթումներէն. Դպրեվանքցիներ որոնք բախան ունեցած են աշակերտելու Դուրեանի։

Դ. Լեւոնդ Եպս. կ'ըսէ իր Յառաջաբանին մէջ, «Դպրեվանքեան անուանեցի սոյն քարոզներն, վասն զի անոնք գրուած են բոլոր այն հոգեւորականներէն, որոնք Արմաշու եւ Երուսաղէմի մէջ աշակերտած են Նորին Ամենապատուութեան Յոբելեար Սրբազանին»։

Հատորս սկիզբը զարդարուած է Ամեն. Յոբելեարին պատկերով, իսկ մէջը՝ ողբացեալ Պօղոս Ն. Կիւլպէնկեանի լուսանկարով։

Առաջին էջերու մէջ Դ. Լեւոնդ Եպս. կը պատմէ թէ ինչպէ՛ս ոգեւորութիւններ և ոգեւորութիւններ կրած է Դուրեան եղիշէ Հայր Սուրբէն, իր պատանութեան տարին եւ կը նկարագրէ իր Դպրեվանք մտնելն ու աշակերտիլը Դուրեան Սրբազանին։

Էջ 93 — 98 նուիրուած են Պօղոսի «սրբափայլ Յիշատակին», հոգեյոյզ էջեր Դ. Լեւոնդ Եպս.ի գրչէն։ Իսկ մնացածները զուտ քարոզներ են, համագրուած ժամանակագրական կարգով։

Աստուծոյ Տաճարին մէջ (Մկրտիչ Եպս. Ազաւնունի), Ս. Պատրիարքի Անուան Տօնը, (Բարգէն Եպս. Կիւլէսէրեան), Որոմանց Առակը (Զաւէն Արքեպս. Եղիայեան), Կանայի Հարցնիքը (Ֆ Սրմբատ Եպս. Սատաէթեան), Օրհնաց Պահպանութիւնը (Ֆ Խորոյ Եպս. Պէհրիկեան), Փոքրիկ Զոհողութիւնները (Թորգոմ Արքեպս. Գուշակեան), Լաւին Ընտրութիւնը (Դնել Եպս. Գալէմքեարեան), Մեծ Պահոց Խոհեր (Մեսրոպ Արքեպս. Նարոյեան), Դատաստանը (Դ. Լեւոնդ Եպս. Դուրեան), Դիտութիւն և Հաւատք (Երուանդ Եպս. Փերատահեան), Կեանքը և Կրօնքը (Դարեգին Եպս. Տրապիզոնի), Տիրոջ Հոգին (Գրիգորիս Եպս. Պալաքեան), Խընամքը (Ֆ Ագան Ծ. Վրդ. Համամճեան), Թարգմանիչները (Տիրայր Ծ. Վրդ. Մարգարեան), Իմաստութիւնը (Շահէ Ծ. Վրդ. Գասպարեան), Իրական Մարգարիտները (Արտաւազդ Ծ.Վրդ.Միւրմէեան), Անձնազատութիւնը (Նորայր Արդ. Պօղարեան), Կանաչ Կիւրակի (Տիրան Արդ. Ներսէսեան), Իբր Լուսոյ Որդիներ (Տ. Ներսէս Ա. Քէնդ. Թասուգեան)։

Ամէնքն ալ խնամքով մտածուած և գրուած կտորներ, որոնց ընթերցումը վստահ ենք որ շահեկան պիտի ըլլայ կրօնասէր հոգիներու եւ գրական ճաշակ ունեցողներու համար։

Եթէ կանոնաւոր ժամանակներու մէջ տպուած ըլլային, Դ. Լեւոնդ Սրբազան շատ դիւրութեամբ պիտի կրնար ձեռք բերել բոլոր Դպրեվանքի հոգեւորականներուն քարոզները եւ կազմել աւելի տուեալ հատոր մը։

Այս հատորին կազմութեան դասաւորը բան ինքեան խնամքով է և գեղեցիկ, իսկ նպատակը ազնիւ։— Աշակերտութիւնը իր հոգեւոր կեանքին արգասիքներովը ձօնել իր Վարդապետին։

Ջերմապէս կը յանձնարարենք Դպրեվանքեան Քարոզներուն ընթերցումը հայ ժողովրդին։

Բ. Ե.

ԴԷՄՔԵՐ (Պետրոս Ադամեան,— Ց. Ց. Պարոնեան — Երուանդ Մանուէլեան,— Խաչատուր Արոյեան,— Մատաթիա Դարապաշեան,— Վանան Թէքէեան,— Դանիէլ Վարուժան,— Ատամ Եարճանեան,— Համաստեղ,— Էտկար Շահին,— Յովսէփ Փուշման։) Գրեց՝ Արշակ Զօպանեան։ Հրատարակութիւն Հայ Կրթական Հիմնարկութեան։ Տպ. Մասիս, Փարիզ։ 1929 մեծ 8° էջ 190։ — Գին՝ 1 Տոլար։

Ասիկա Բոզ խումբն է Զօպանեանի կենդանագրած դէմքերուն։ Զօպանեան այլեւայլ առիթներով ուսումնասիրութիւններ նուիրած է այլեւ այլ թերթերու մէջ գեղարուեստի և գիտութեան հայ վարպետներու գործին և անձին։

Այս հատորին մէջ անոնք գրուած են քով քովի, իրենց պատկերներով, և կազմած են ամբողջութիւն մը։ Այսպէս կամ այնպէս՝ սերունդ մը կ'ուսումնասիրուի հա՛ն։ Զօպանեան, որ լաւ գիտոյ մը և վերլուծող մըն է, իր գրական հմտութեան լայն հորիզոնով և իր սեփին հրապոյրով նոր շրջանակներու մէջ կը դնէ իր ուսումնասիրած դէմքերը։ Զօպանեան անձնապէս ունի իր նախասիրութիւնները եւ բան այնմ կ'ուսումնասիրուի իր քննադատութեան մեթոտը իր նախասիրած դեմքերուն հանդէպ։ ԴԷՄՔԵՐուն մեծ մասը պատմութեան կը պատկանի արդէն։ Բայց անոնք կը խօսին այս հատորին մէջ։ Դերասանը, երգիչը, գիտունը, պատմագիրը, բանաստեղծը, նկարիչը, կը ներկայացնեն իրենց ազգային արժէքները, որոնք թանկագին են։ Նոր սերունդի համար մա՛նաւանդ շատ հետաքրքրական պիտի ըլլայ այս հատորը։ վասն զի ասով պիտի ճանչնան մօտիկ անցեալի մտաւորական դէմքերը։

ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՈՒԹԵԱՆ շնորհաւորելի հրատարակութիւններէն մէկն է այս, որուն հրամայք մը տուած է ՄԱՍԻՍ տպարանին գեղարուեստական ճաշակը։

Բ. Ե.

digitised by A.R.A.R.@